

ուրիշ կերպ անհասկանալի էլ է բոլորովին: Ի ցոյց ժողովրդեան բարձրացրած հաղորդութեան սուրբ խորհուրդը «յարութիւն» անուանել էլի մի միտք կունենար, բայց սոսկ միայն «յոյս» — ինչպէս ուղենք ձգձգենք՝ ուղիղ խմաստ չի տայ. մինչդեռ «յոյս յարութեան» բոլորովին պարզ է, մանաւանդ վերև յիշուած բացատրութիւններէց յետոյ, և առանց մեր խօսքը երկարացնելու կարող ենք հաստատապէս պնդել, որ ուղիղն այդ է և այդպէս պէտք է արտասանել պատարագի մէջ:

Կարապետ Վարդապետ



ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ԵՒ ՄԵՐ ԿԱՆՈՆԱԿԸՆ ԻՐԱՌՈՒՆՔԸ

Կանոնագիրք ասելով մեզանում հասկանում են այն ձեռագիրները, որոնց մէջ գրեթէ բացառապէս կանոններ, կանոնական խրատներ և առհասարակ կանոնական նիւթեր են պարունակուում: Իրանք ձեռագիրները «կանոնագիրք» վերնագիրը չունին իրենց գլխին, առաջին վերնագիրը որ գրուած է լինում այս ձեռագիրների սկզբի երեսին՝ լինում է առաջին կանոնագրութեան յատուկ վերնագիրը (օր. «վարդապետութիւն առաքելոց») և ոչ թէ ամբողջ հաւաքածուի ընդհանուր վերնագիրը: Կանոնագիրք են անուանում այդ ձեռագիրները մի քանի ձեռագիրների յիշատակարաններում:

Բազմաքիւ են մեզ հասած կանոնագիրք ձեռագիրները: Միայն Մայր Աթոռի Մատենադարանում մօտ 50 հատ կայ: Գոնէ մի մի օրինակ կայ նաև իւրաքանչիւր կոնսիստորիայում, հոգևոր կառավարութիւններում, ինչպէս և էջմիածնի Սինդուում: Քիչ չեն և այն օրինակները, որ ցրուած են մասնաւոր անձերի և այլ և այլ հիմնարկութիւնների մատենադարաններում թէ Ռուսաստանում

և թէ արտասահմանում: Այս բոլոր բաղմաթիւ ձեռագիրներէց՝ իւրաքանչիւրին ներկայումս սովորաբար մի և նոյն «կանոնագիրք» անունն է յատկացւում: Սակայն նոյնութիւնը միայն անունն մէջ է, իսկ ձեռագիրները խիստ տարբերում են միմեանցից:

Կանոնագիրք ձեռագիրները միայն նրանով չեն տարբեր որ տարբեր ժամանակներում եւ տարբեր տեղերում են գրուած: Մենք ունինք ձեռագիրներ ժ.Գ.—ժ.Թ. դարերից, գրուած զանազան թէ յայտնի և թէ անյայտ վանքերում, քաղաքներում և այլն: Եթէ ձեռագիրների տարբերութիւնը միայն տեղի և ժամանակի կողմից լինէր—մենք գործ կունենայինք մի և նոյն «գրքի» միայն տարբեր «հրատարակութիւնների» հետ:

Սակայն տարբերութիւնը աւելի էական և կարևոր նշանակութիւն ունեցող է. տարբեր են ձեռագիրները իրենց բովանդակութեամբ: Բաւական է համեմատել միայն երկու ձեռագիր՝ համոզուելու համար: Մի ձեռագրում կան կանոններ, ամբողջ կանոնագրութիւններ, որ միւսի մէջ չկան. բացի դրանից մի և նոյն կանոնը զանազան ձեռագիրներում շատ անգամ տարբեր կերպով է արձանագրուած:

Կանոնագիրք-ձեռագիրների բովանդակութիւնը փոփոխական է եւ անորոշ. կանոնների խմբագրութիւնը—զանազան եւ անհաստատ:

Խիստ տարբեր են ձեռագիրները նաեւ նիւթի դասաւորութեան կողմից: Այս տեսակէտից բոլոր կանոնագիրք ձեռագիրները երկու տեսակի են բաժանւում ամբողջական և հատընտիր:—Ամբողջական կանոնագրքերում կանոնները դասաւորուած են ըստ կանոնագիր աղբիւրների: Օր. գրւում է «Կանոնք Նիկիականք» և այս վերնագրի տակ առաջ են բերւում Նիկիական բոլոր կանոնները, մէկը միւսին կից, հերթով և թուանիշ գլխակարգութեամբ: Այդ կանոնագրութիւնից յետոյ գրւում է մի այլ կանոնագրութիւն (օր. Սահակ հայրապետի, Շահապիվանի, և այլն) նոյնպէս ամբողջովին, իւր բոլոր կանոններով և մի առանձին թուակարգութեամբ: Կանոնագրութիւնները

դասաւորուած են լինում սովորաբար մօտաւորապէս կանոնադիր աղբիւրների ժամանակագրական կարգով. սակայն երբեմն ժամանակագրական կարգը խանգարւում է, որովհետեւ մի քանի կանոնադրութիւններ իրենց ժամանակագրական հերթից առաջ են դասուում իրենց կանոնադիր աղբիւրների առանձին հեղինակաւորութեան պատճառով: Առ հասարակ չէ կարելի ասել, որ ամբողջական կանոնադրքերում կանոնադրութիւնների դասաւորութիւնը որոշ և ճշտութեամբ պահուած մի կարգ ունենար:—Հատընտիր ձեռագիրներում կանոնները առաջ են բերւում խառն կերպով, առանձին-առանձին և ոչ թէ նոյն կանոնադրութեանը պատկանող միւս կանոնների հետ միասին. երբեմն կանոնները խմբուած են լինում ըստ նիւթի. մեծ մասամբ չի յիշուում, թէ ինչ կանոնադիր հեղինակութիւնից է սահմանուած արձանագրուած կանոնը: Ամբողջական և հատընտիր տեսակի կանոնադրքերը՝ խիստ տարբեր են միմեանցից նաև իրենց նիւթի, բովանդակութեան կողմից:

Նիւթի դասաւորութեան կողմից տարբերւում են միմեանցից ոչ միայն ամբողջական տեսակի ձեռագիրները հատընտիր ձեռագիրներից, այլ մի և նոյն ամբողջական տեսակին պատկանող զանազան ձեռագիրներն էլ մի և նոյն ծրագրով կազմուած չեն: Այսպէս օր. Մայր Աթոռ Մատենադարանի բոլոր ամբողջական կանոնադիրք-ձեռագիրները իրենց բովանդակութեան և դասաւորութեան (ծրագրի, կանոնադրութիւնները արձանագրելու հերթի) կողմից՝ 5 խմբի են բաժանուում: Խիստ տարբերւում են միմեանցից նաև հատընտիր տեսակին պատկանող առանձին ձեռագիրները թէ բովանդակութեամբ և թէ դասաւորութեամբ: Եւ առհասարակ հատընտիր ձեռագիրները ամբողջականներից շատ անկարգ, խառն, չիտթ ու թերի գրուածքներ են: Եւ այս պատճառով պակաս նշանակութիւն կարող են ունենալ՝ քան ամբողջականները:

Կանոնադրութիւնները ձեռագիրներից մի քանիսում բաժանուած են կանոնների (դրուխների, յօդուածների),

իսկ ուրիշներում գրուած կապ շարագրութեան ձևով, առանց առանձին գլուխների բաժանելու: Երբ կանոնագրութիւնը գլուխների է բաժանուած լինում, գլուխները հերթով նշանակուած են թւանշաններով: Երբեմն կանոնագիրքը բացի իւրաքանչիւր կանոնագրութեան կանոնների առանձին թուակարգութիւնից՝ ունենում է և իւր մէջ արձանագրուած բոլոր կանոնների ընդհանուր թուակարգութիւնը, հաշուելով կանոնագրքի առաջին կանոնից մինչև վերջինը: Սակայն ձեռագիրների այս թուակարգութիւններն էլ խիստ տարբերուած են միմեանցից, և հազիւ թէ գտնուի երկու ձեռագիր որ նոյն թուերով նոյն կանոնները նշանակած լինէին:

Բովանդակած նիւթի բնաւորութեան կողմից ամբողջական կանոնագիրք-ձեռագիրները պատմական հաւաքածուներ են: Դրանք պարունակում են իրենց մէջ զանազան և երկար դարերի ընթացքում յօրինուած կանոններ, որ գրի են առնուել և կանոնագիրք մուծուել մաս-մաս, միմեանցից անկախ, տարբեր տեղերում և տարբեր ժամանակներում, առանց միմեանց հետ համեմատելու, յարմարեցնելու և նոյն իսկ հաշտեցնելու: Կանոնագրքերը համակարգուած, սիսթէմի վերածուած օրինագրքերի նման չեն, և զարմանալու բան չէ, որ կանոնագրում արձանագրուած կանոններից շատ շատերը միմեանց հակասում են. դարերի ընթացքում մեր եկեղեցու կարգերը փոփոխութիւնների են ենթարկուել. նոր ժամանակները նոր հանգամանքներ, կեանքի նոր պայմաններ են առաջ բերել, նոր հոսանքներ ստեղծել:

Ձեռագիր կանոնագրքերը մասնաւոր անձերի գործ են. պատշոնական օրինագիրք չեն դրանք, այլ մասնաւոր անձերի աշխատասիրութիւն: Այս՝ ինքն ըստ ինքեան հաւանական մի ենթադրութիւն է, որ կարելի է թէ բացասական և թէ դրական ապացոյցներով հաստատել: Ըստ ինքեան հաւանական ենթադրութիւն ենք համարում՝ որովհետև պաշտօնական օրինագրքեր առաջ դալու համար անհրաժեշտ է որ ազգի կեանքը, վիճակը համապա-

տասխանէ որոշ քաղաքակրթական պայմաններէ Պաշտօնապէս վաւերացուած, պաշտօնապէս գործադրելի յայտարարուած օրինագիրք կարող է լինել հետեւանք իրաւական զարգացման միայն որոշ շրջանի: Պաշտօնական օրինագրքի գաղափարն իսկ մի այնպիսի գաղափար է որ ծանօթ և մատչելի կարող է լինել որոշ իրաւական հասունութեան հասած ազգերի, և հնումը շատ քչերն են ունեցել այդ գաղափարը: Այս բոլորը և մեր անցեալի քաղաքակրթական վիճակը (որքան այդ մեզ յայտնի է) ի նկատի ունենալով՝ մենք հաւանական բան ենք համարում պաշտօնական կանոնագրքի բացակայելը մեղանում: Սակայն այս հաւանական ենթադրութիւնը կարելի է հաստատել բազմաթիւ այլ ապացոյցներով:

Ոչ մի հաստատեցեկութիւն, պատմական ցուցմունք մենք չունինք, թէ արդեօք երբ եւ իցէ եղել է մեզանում մի պատօնական կանոնագիրք (կանոնաւրան): Յայտնի է մեզ, որ Ը դարում Յովհաննէս Իմաստասէր կաթողիկոսը (Օձնեցի) կազմել է մի հաւաքածու կանոնների: Մեզ հասել է կաթողիկոսի յիշատակարանը, որ երեւի հաւաքածուի վերջն էր դրուած եղել, իսկ այժմ մեր ունեցած կանոնագրքերից դուրս է ընկած (Մայր Աթոռի Մատենադարանի բոլոր 50 ձեռագիրներից միայն մէկում մնացել է այդ յիշատակարանը, այն էլ ոչ իւր սկզբնական տեղում, այլ կանոնագրքի վերջը ուրիշ հատուածների հետ խառն): Սակայն ոչ մի հիմք մենք չունինք Իմաստասէրի այս ժողովածուին պաշտօնական նշանակութիւն նուիրելու: Կաթողիկոսից կազմուած (հաւաքուած) լինելը դեռ ևս մի ապացոյց չէ հաւաքածուի պաշտօնական լինելու համար: Կաթողիկոսը կարող էր այդ կատարել և որպէս մի մասնաւոր անհատ, ինչպէս որ նմանօրինակ հաւաքումներ կատարուած են եղել Յովհաննէս Իմաստասէրից թէ առաջ և թէ յետոյ մասնաւոր անհատներից: Այն էլ պէտք է նկատել, որ կաթողիկոսից կազմուած լինելը չի կարող պաշտօնական բնաւորութիւն ընծայել հաւաքածուին, քանի որ կաթողիկոսները կանոնագիր իշխանութիւն չունին մե-

զանու՛մ։ Պաշտօնական բնաւորութեան մասին ոչ մի ակնարկ չկայ նաեւ կաթուղիկոսի յիշատակարանում։ Պաշտօնական չեն համարել այդ հաւաքածուն նաեւ յետագայ արտագրողները, որոնք բազմաթիւ և կարեւոր փոփոխումներ և յաւելումներ են արել այդ հաւաքածուի վերայ. այնպէս որ այսօր արդէն բոլորովին անյայտ է մեզ թէ ինչ կանոնադրութիւններ, ինչ կանոններ, որպիսի խմբադրութեամբ և ինչ դասաւորութեամբ պարունակուած են եղել Իմաստասէրի կանոնադրում (ինքը Յովհաննէս կաթուղիկոսը իւր հաւաքածուն «կանոնագիրք» չի կոչում). և այդ կանոնագիրքը վերականգնել կարելի է միայն բանասիրական հետազօտութիւնների օգնութեամբ։

Շատ հաւանական է, որ նոյն ժամանակ եղել են և դործածուել նաեւ կանոնների այլ հաւաքածուներ, որոնք տարբեր էին Յովհաննէս կաթուղիկոսի կազմածից թէ իրենց պարունակութեամբ ու խմբադրութեամբ և թէ դասաւորութեամբ (այսպիսի ենթադրութեան է բերում տարբեր խմբերի կանոնագիրք-ձեռագիրների համեմատութիւնը)։ Գուցէ Իմաստասէրի կանոնագիրքը հնումը աւելի մեծ հեղինակութիւն էր վայելում, հետեւապէս և ընդօրինակոււմ բազմաթիւ արտագրողներից. բայց դրա պատճառը ոչ թէ մատեանի պաշտօնական լինելն էր, այլ հաւաքածուի լիակատարութիւնն, և այլ յարմարութիւնները (որոնց մասին Իմաստասէրը յիշում է իւր յիշատակարանում)։ Սակայն, ինչպէս տեսանք, այդ հեղինակաւորութիւնը արգելք չեղաւ, որ յետագայ արտագրողները խանդարելին և փոփոխէին կաթուղիկոսի կանոնագիրքը։

Յամենայն դէպս, եթէ նոյն իսկ մի բոպէ ենթադրելու էլ լինինք, որ Յովհաննէս Իմաստասէրի կանոնագիրքը պաշտօնական մի կանոնարան է եղել, դարձեալ այդ ենթադրութիւնը նշանակութիւն կունենայ միայն ի դարի և մինչև այդ ժամանակը եղած կանոնադրութիւնների համար. մինչդեռ մեր այժմեան կանոնագրքերի մեծ մասը յետագայ դարերում յօրինուած և կանոնագիրք մուծուած կանոնադրութիւններից է բազկացած։

Ինչ կը վերաբերի այժմեան, մեր ձեռքը հասած կանոնադիրք-ձեռագիրներին, այստեղ հազիւ թէ որ և է կատարած կարող է լինել, որ դրանք բոլորն էլ մասնաւոր անհատներից հաւաքուած և խմբադրուած հաւաքածուներ են։ Այս պարզ կը լինի եթէ մանրամասն կերպով քննենք կանոնադիրքերի բովանդակութիւնը, համեմատենք դրանց միմեանց հետ և ուշադրութիւն դարձնենք դրողների յիշատակարանների վերայ։ Այսպիսով մենք կը կարողանանք մասամբ պարզել և վերականգնել այժմեան կանոնադիրքերի կազմութեան եղանակը և ստամութիւնը, որ մի և նոյն ժամանակ վճռող նշանակութիւն կունենայ նաև առաջիկայ խնդիրը լուծելու համար։ Յիշատակարանները (թէ ամփոփ, վերջաբանութիւններ, ձեռագրների վերջումը գրուած և թէ փոքրիկ նկատողութիւններ և ծանօթութիւններ, ձեռագիրների մէջերումը) մեզ յայտնում են, որ ձեռագիրների դրողները «հասարակ մահկանացուներ» են — մի աշխարհական, մի դպիր, մի տիրացու, մի քահանայ, շատ քիչ է պատահում նոյն իսկ եպիսկոպոսի տիտղոս ունեցող գրող։ Բայց այս դրողները կանոնադիրքի արտագրողները միայն չեն եղել, այլ կազմողները, հաւաքողները։ Եւ այս մեզ պարզում են նոյն յիշատակարանները։ Մէկը գրում է, որ յետագայ կանոնադրութիւնները իւր արտագրելի օրինակում չեն եղել և ինքը ուրիշ տեղից է ընդօրինակել, միւսը տեղ-տեղ, առանց որ և է յիշատակութեան, այնպիսի կանոնադրութիւններ է արձանագրում որ միւս օրինակներում չկայ, ուրեմն կամ ինքն է ուրիշ տեղից քաղել այդ, կամ քաղողը եղել է իւր արտագրելի օրինակը կազմողը։ Մէկը գրում է՝ թէ այս ինչ կանոնադրութիւնը «ոչ գրեցաւ» և բաց է թողնում ամբողջ կանոնադրութիւններ, միւսը նոյնը անում է առանց այդ մասին յիշելու։ Մէկը յիշում է, որ այս ինչ կանոնադրութեան միայն մի քանի կանոններն է արձանագրում և մնացածները բաց է թողնում, միւսը նոյնը անում է առանց յիշատակութեան։ Նոյն գրողները կանոնադիրքի թէ հաւաքողները ու կազմողներն էին և թէ դասաւորողները, ցանկեր կազմողները — թէ

խրադանշիւր կանոնադրութեան համար առանձին և թէ ընդհանուր («միահամուռ») ցանկ ամբողջ կանոնադրքի բոլոր կանոնների համար (այս մասին էլ երբեմն յիշում է յիշատակարաններում)։

Բացի այս բոլորից անհրաժեշտ է նկատել որ կանոնադրքին պաշտօնական զօրութիւն ընծայելը առաջ կը բերէ մի շարք առարկութիւններ, տարակուսանքներ և անեղանդի դժուարութիւններ, որոնց մասին առանց դժուարութեան կարող է արդէն դուշակել ամեն մի բանիմաց անձն ի նկատի ունենալով մեր նախորդ գիտողութիւնները։

Առ հասարակ կանոնագրում ոչ մի ակնարկ կամ նշան չկայ, որ ցոյց տաւ նրա պաշտօնական կանոնաբան լինելը, իսկ նրա մասնաւոր հաւաքածու լինելը պարզ և հաստատ կերպով ասպացուցում է բազմաթիւ նշաններով։ Նոյն այդ նշանները բնորոշելով մեզ կանոնադրքի կազմութեան, հաւաքման եղանակը—պարզում են կանոնագրի բովանդակութեան պատահական լինելը։

Անշուշտ կանոնադրութեան կան շատ կանոնադրութիւններ որոնք երբ և իցէ պարտադիր զօրութիւն են ունեցած, սակայն կասկած չկայ, որ կանոնադրքերում արձանագրուած կան նաև շատ այնպիսի կանոններ, որոնց պարտադիր համարելը միայն դրողի անձնական կարծիքը կամ ցանկութիւնն է եղել։ Այս պատճառներով եթէ մի կանոն արձանագրուած է որ և է ձեռագիր-կանոնադրութեան այդ դեռ չէ նշանակում թէ առանց կասկածի կարելի է այդ մի ճշմարիտ կանոն համարել։

Անփոփոխ մեր տաածները։

Կանոնադրքը ասելով մենք ի նկատի չունինք մի որոշ գիրք՝ որոշ, անփոփոխ և հաստատ բովանդակութեամբ, մեր առաջը դրուած են բազմաթիւ ձեռագիրներ, որոնց բովանդակութեան մէջ մեծ տարբերութիւններ կան թէ քանակական և թէ որակական. — ձեռագիրներ որոնք պատմական, մասնաւոր հաւաքածուներ են և լի են հաստական և պատահական (անփոխ) կանոններով։

Այս բոլոր խորհրդածութիւններից և նկատողութիւններից պէտք է պայմանաւորուած լինի այն, թէ ինչպէս պէ՛տք է վերաբերուի մեր եկեղեցու իրաւաբանութիւնը կանոնագրին:

Առաջինը որ կանոնագրերը պատմական ժողովածուներ են. նրանց մէջ պարունակուածը պատմական նիւթեր են և կանոնագրերը մեր եկեղեցու իրաւունքի պատմութեան մի արձանագրութիւն է. Հեռեապէս, նախ անհրաժեշտ է պատմաբանական—իրաւաբանական տեսակէտից նետագոյծի այդ նիւթը: Այս հեռազօտութիւններից պէտք է նախորդէ բանասիրական ուսումնասիրութիւն կանոնագրի բնագրի, երբ կը բաղդատուին բաղձաթիւ (եթէ ոչ բոլոր եղած) ձեռագիր—կանոնագրերի օրինակները թէ միմեանց հետ և թէ ամեն տեսակի այլ հին մատենագրութիւնների հետ, այն ժամանակ հնարաւոր կը լինի կազմել կանոնագրի համեմատական կամ քննական մի խմբագրութիւն: Այսպէս կը պարզուի կանոնագրի կանոնագրութիւնների իսկական կազմը, կանոնների ճշմարիտ բնագիրը, միաժամանակ կորոշուի նաեւ այդ կանոնների ու կանոնագրութիւնների յօրինման և խմբագրման պատմութիւնը և թէ կանոնագրի կազմուելու պատմութիւնը:

Այնուհետեւ պատմաբանական իրաւաբանական հեռազօտութիւններով կը ստուգուի թէ որ կանոնը և ինչ ժամանակից է սկսել գործել, պարտադիր լինել, երբ և ինչպէ՛ս դադարել, վերացուել: Այսպիսով կը վերականգնուի մեր եկեղեցու իրաւական կարգերի պատմական յաջորդական ընթացքը, կը ստուգուի կանոնագրի պարունակած կանոնագրութիւնների և կանոնների իրաւական իսկութիւնը, որով ոչ միայն առանձին դարձումներ և խմբագրութիւններ, այլ նոյն իսկ ամբողջ կանոններ և կանոնագրութիւններ կարող են անվտեր դուրս բերուել իրաւական տեսակէտից:

Բանասիրական և պատմա-իրաւաբանական այս հեռազօտութիւնները անհրաժեշտ նախապայտարասութիւն

են կանոնագրից զուտ իրաւաբանութեան, այսինքն մեր ներկայ գործող իրաւունքի դոգմատիկ-իրաւաբանական ուսումնասիրութեան համար—անսխալ եւ հաստատ կերպով օգտուելու: Զուրկ լինելով ուսումնասիրելիք իրաւունքին եւ նիւթին վերաբերեալ պատմաբանական տեղեկութիւններից՝ դոգմատիկ-իրաւաբանը շատ բան սխալ կը հասկանայ, շատ բան բոլորովին չի հասկանայ: Պատմաբանական իրաւաբանութիւնը մեզ ցոյց կը տայ, թէ կանոնագրքի կանոնագրութիւններից որոնք եւ ինչ չափով կարող են այսօր էլ գործող իրաւունքը համարուել եւ թէ ինչպէս պէտք է մեկնաբանել եւ ինչպէս հասկանալ իւրաքանչիւր կանոնի ճշմարիտ իմաստը: Դոգմատիկ-իրաւաբանութիւնը մեր գործող կանոնական իրաւունքը պարզելիս եւ շարագրելիս պէտք է հիմք ընդունէ ներկայումս տիրող կանոնական սովորոյթները, որովհետեւ, ինչպէս յայտնի է, կանոնական սովորոյթն է հանգիստանում ներկայումս մեր եկեղեցւոյ կարգն ու կանոնը որոշող կանոնագիր ազդիւրը: Այս պատճառով անհրաժեշտ է ի նկատի առնենալ, որ կանոնագրում գտնուող կանոններից շատերը վերացուած են թէ յետագայ (կանոնագրում չը ներմուծուած) ժողովներից սահմանուած եւ թէ տիրող սովորոյթներից հաստատուած կանոնների պատճառով: Ուրեմն կանոնագիրքը միայն նիւթի շեմաւրան է, որ միայն բազմաշեսակ եւ մանրագննիմ հետազոտութիւններից յետոյ կարող կը լինի իւր որոշ մասերով մեր արդի, գործող կանոնական իրաւունքի համակարգութեան մէջ տեղ գտնել:

Այս բոլորից հետեւում է, որ կանոնագրքի սրեւ կանոնի վերայ առանց այլեւայլութեան մատնանիչ անելը երբեք անպայման իրաւաբանական աստիճանիցի եւ իրաւական հիմքի գորութիւն ունենալ չէ կարող. քանի որ այդ կանոնը կարող է անվաւեր լինել, այդ կանոնը կարող է հաստատական լինել թէ նոյն կանոնագրքի մի ուրիշ կանոնի եւ թէ արդի տիրող սրեւ սովորոյթի: Մեր այժմեան գործող իրաւունքի համար, որի հիմքը սովորոյթն է կազմում—մասամբ դրի ստեղծում (օր. Պետժեներէում), մասամբ ան-

գիր—կանոնագիրքը, ինչպէս ասացինք, որոշ (սահմանափակ և օժանդակող) նշանակութիւն ունի. ուստի և իրաւաբանութիւնը պարտաւոր է ուսումնասիրել և օգտուել կանոնագրերից: Սակայն միայն կանոնագիրքը չէ որ այդպիսի նշանակութիւն ունի. կանոնագիրքը հնուօրինից մնացած միակ կանոնական աղբիւրը չէ, որից պէտք է օգտուի մեր այժմեան իրաւաբանութիւնը: Բացի կանոնագրերից նոյնպիսի նշանակութիւն ունին նաև Մաշտոցը, Մխիթար վարդապետի (Պօշ) Դատաստանագիրքը, Ներսէս Շնորհալու Ընդհանրականը և թէ ընդհանրապէս մեր բոլոր մատենագիրների հեղինակութիւնները և գրութիւնները (թէ աստուածաբանական, թէ պատմաբանական և թէ այլ բովանդակութեամբ), որոնք նոյնպէս անհրաժեշտ նիւթեր կարող են մատակարարել մեր եկեղեցու կանոնական իրաւաբանութեանը:

Սիրական Տիգրանեան



ԵԿԵՂԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ

ԶՀԱՍՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԿՈՆԳՐԱԿՆԵՐ

Յունուարի «Արարատի» պաշտօնական բաժնում խմբագրութիւնս անհրաժեշտ համարեց հրատարակել միասին Նորին Վեհափառութեան երեք կանոնական կոնդակները՝ վերաբերեալ չհասութեան: Դրանցից առաջինը, տրուած 1899 թուի յունիսի 30-ին, իրաւունք է տալիս թեմական Ատեաններին (Կոնսիստորիա), ասանց դիմելու Սինոդ, թոյլ տալ ցանկացողներին ամուսնանալ խնամեական հինգերորդ աստիճանում: Այս աստիճանի խնամեական պատկերը արդէն մի քանի տարի է, որ պաշտօնապէս թոյլատրելի էին ճանա-